Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

750

202-18
Ш-72

1892

200
388-ԱԿ
202.18
Ա-72 Աշ.
200
388-ԱԿ

ՏԵՍԻԼ
ԽՈՐՀՐԴԱԻՈՐ
ԽԱՉԻ

ՍՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տեսլեամբ եւ աշխատասիրութեամբ

ԱՒԵՏԻՍ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑ
Ս. Բարդուղիմայ Առաք. վանուց բնակիչ Յաղբակ Նահանգի։

Սրտէս մէկ ծաղիկ, չըկարացի գտանել,
Ու յերկրէ երբէք, կարացի ժողովել,
Հիւսել յարմարել, եւ մէկ փունջ կապել
Իմ եղբարցս նման Ազգիս նուիրել,
Միայն այս խաչ ունիմ, որ երկինքն եմ գտել,
Աղաչեմ ազգիս, իմս էլ ընդունել։

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
1892

ԱԿ
2010

30305-42

Доз. Ценз. Тифлисъ 11-го Февраля 1892 г.

Типографія „АРОРЪ“ Т. Я. Назарьянъ.

12987-58

ՀՐԱՄԱՆԱՒ

Բարձրապատիւ Սէնոդի Մայր Աթոռոյս
Մերոյ Հայաստանեաց

Սրբոյ Էջմիածնի:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երբ երեսուն մէկ ամեայ հասակումս իմ սովորական անաստուածութիւնից Աստուծոյ մեծ պատժով զղջացի և դարձայ. իսկ այժմ ամօթ չեմ համարում պատիժս արտայայտելուն համար քանի պարբերութիւն գրել. բայց նա մի առանձին գրքոյկ է, յուսով եմ որ նա ևս տպագրութեան արժանանայ։

Ուստի ես վարդապետական և քահանայական սերունդ լինելու պատճառաւ, և ընթերցման նշոյլ մեր նահապետական տանից պակաս չլինելուն համար, միշտ մեր տան հին սովորութիւնն էր մեծին կամ փոքրին և կամ ո՛և իցէ ընթերցողաց, չորեքշաբաթի օր գումարիմբից ասել, ուրբաթ օր խաչի ճառ կարդալ, և ամեն երեկոյ ընտանիքով «եկեսցէ» ասել։ Բայց քանի տարի առաջ, որ մեծ մայրս մեռաւ, նորանից յետ կորուսինք և այս սովորութիւնը։

Արդ՝ ազատարար Աստուած յերբ իւր անճառելի ողորմութեամբ զիս արժանահաս պատժիցս ազատեց, որոյ համար շարունակեցի կարողութեանս չափ

ուղիղ հաւատով և սրտով Աստուծոյ ծառայել, և իմ նախահարց սովորութիւնը կատարել։ Ս. Նարեկացւոյ խաչի ճառ կարդացած ժամանակ երեսուն երեք յօդուած հասնելուս րոպէին՝ մի քաղցր տպաւորութիւն կ'զգայի և շատ զմայլած քանի անգամ կրկնում էի նոյն իսկ բառերը։ Ուստի օրերից մէկ հինգշաբթի՝ որ ուրբաթ էր լուսանում, գիշեր անկողնիս մէջ մտաբերեցի՝ գիշերը շուտ արթնանամ, որ խաչի ճառը կարդամ, և մտացս մէջ ծագեց այնքանի բառից ուրախութեան զգացումն, որ ասած էր Սուրբ Գրիգոր Նարեկացւոյ բարերուղխ բերան (*Զորեր ծագեանս եզերաց տիեզերաց կնիք պահպանական նշան ամենազօր*)։ Ահաւասիկ այս բառերի վերայ երկար մտածելով և երևակայելով թէ՝ ինչ զարմանալի Աստուածային կնիք է, և ինչպէս պահպան է ծագէ ի ծագ աշխարհի. և ինչ լուսաւոր հոգի է ունեցել այս հոգեզգօն նկարագրող։ Ուստի շատ երկար ու բարակ մտածելուց քունս տարածէր, չ'գիտեմ շատ թէ՝ քիչ։

Ցեսի արևելքէն արևմուտ, և հարաւէն մինչև հիւսիս—որքան որ կապուտակ երկնից երեսը աչքերս նշմարում են, մէկ այնպէս ահագին խաչ, զարմանալի գոյն և հիանալի նկար, որ ոչ երբէք մարմնաւոր բերանս կարող է պատմել։ Մ'ի այնպէս գոյն ունէր, որ այդ գոյնը ես աշխարհումս չեմ տեսել, որ համեմատեմ։ Լուսնեակից աւելի լուսով, բայց լուսնեակի լոյսի նման չէր, արեգական պէս փայլուն

էր, բայց նմանութիւնը չունէր և չէր ծակում մարդուս աչքեր, քիչ երկարուկարճ ոսկեգոյն և կարմիր շողեր փայլում էին եզերքից։ Սակայն արեգական նման չէին երկարանում, որ գային մարդուս աչք մտնեն. ես քնիս մէջ տեղեակ չեմ ինչքան ժամանակ, բայց ինձ մօտ կարծեմ թէ երեք կամ չորս ժամ մտիկ եմ տալիս այդ խաչին, երբ զարթեցայ, մի այնպէս ուրախութիւն էր պատել ինձ, այնքան զուարճանում էր սիրտս, որ անպատմելի է։ Խենթի պէս ցատկեցի անկողնից և դուրս վազեցի կարծելով թէ ստոյգ էր տեսածս, բայց տեսայ միևնոյն երկինք՝ ինչպէս երէկ և միւս օր, վերադարձայ թէ քնանամ, էլ ինչ կարելի է որ քունս մօտ գայ աչքերիս, ստիպմամբ աչքերս խփում եմ և կ'երևակայեմ միևնոյն խաչ երկնից երեսը. այնուհետև չ'քնեցի մինչև առաւօտ։ Իսկ երբ առաւօտ երեսս լուացի, թուղթ դրի առաջս փայտից գործիք շինելով՝ յարմարեցնել բաժակի բերանով և զանազան անօթեղէնների եզերքով նկարագրեցի միևնոյն խաչ, որ ահա տեսնում էք։ Եւ նշմարում էի նորա մէջ աստուածային եռանձնութեան անուան երկոտասան տառեր. Ահարոնի լակասի երկոտասան ականց անունների քանիսը, ոսներկու ամիսների և Առաքելոց անուններ։ Նաև քսան և չորս մարգարէից դասք, որ լուսեղէն մարդկային կերպարանքով անունները տակ գրած պարառուած, տեսնում էի խաչի շրջապատը։ Չորս տարերք, չորս եղանակ, չորս գետեր դրախտին, և

չորս աւետարանչաց պատկերք խաչաձև։ Ուստի մեծ դժուարութեամբ և քիչ յարմար օրինակեցի, իսկոյն և եթ անունները շարքի գրելով, ուղիղ վերջաւորումը գծերի մէջ, ոչ աւել կմնար և ոչ պակաս—ինչպէս տեսնում էք։

Արդ՝ այժմ մտածեցի և արժան համարեցի տպագրել և նուիրել ազգիս, համառօտ և իմ կարողութեանս չափ տեղեկութիւններով, ի յիշատակ նուիրատու ստորագրեալ ազգասէր անձանց։



Ներեա՛ Ածդ իմ՝ աննման.
զի գործոյ քոյ չիք ինչ սահման.
այլ փառաւք մեր միշտ այս նշան.
յոր փրկեցաք դառինդ վենման.
միջնորդութեամբ այս ընդրելոյ.
վկայիցքոյ անմահ սրբոյ.
պաւաքելոյն որք պատմին բնք.
յիշեա՛ զանուն յոր յանգինտաւք.

Աշխատասիրեց Ա. Գ. ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑ.

Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Доз. Ценз. Тифлисъ, 11 Февраля 1892 г.

№2001

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Տեսլեանս խաչի մէջ անքննելի Աստուծոյ ընդհանուր զգալի և իմանալի արարչագործութեան խորհրդոյ մակերևոյթ պատկեր նկատում եմ։

Հ. Այդ պատկեր թէ և խաչաձև է, բայց ինչու մի տեսակաւ էլ անուաձև է նկարուած։

Պ. Զաքարիա Մարգարէի չորս կառաց տեսլեան համար հրեշտակ պատասխանում է թէ՝ դոքա չորս հողմք են երկնից, և սորանից սկսելով կարող ենք ըմբռնել թէ՝ ամենայն ինչ որ չորս է խաչի նշանակութիւն ունի, և բուն կառքն էլ անիւներով խաչաձև գործիք է, շարժուն օրինակ երկնի և երկրի։

Հ. Ինչպէս ասում էք, ամենայն ինչ՝ որ չորս է խաչի նշանակութիւն ունի։

Պ. Ահա աշխարհս չորս կողմ ունի, որ է խա-

չաձև. Արևելք, Արևմուտ. Հիւսիս և Հարաւ։ Չորս նիւթէ գոյացութիւն ունի, հողէ, ջրէ, կրակէ և օդէ։ Տարին չորս փոփոխութիւն ունի, Գարուն, Ամառ, Աշուն և Ձմեռ։ Դրախտէն չորս գետք կբղխին, Տիգրիս, Եփրատ, Փիսոն և Գեհոն, որք տիեզերք կ՚թրջեն, ասում է Սուրբ գիրք։ Նմանապէս չորս աւետարան Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհան, որք մարդկանց ոգիներ կ՚ցօղեն, ինչպէս սուրբ Ներսէս Շնորհալին համեմատելով երգում է (Ուրախացաւ գնացիւք գետոց քաղաք իւքին շինեալ Յիսուս, յորմէ վտակք շնորհաց հոսեն զ:գ:յս մարդկան ուռգանեն)։

Հ. Այս տասներկու թիւ ինչ հաշիւ ունի և նշանակութիւն, որ խաչի մէջ տեսնում եմ, Ահարոնի վակասի ականց թիւ տասներկու է, ամխնել տասներկու են, և առաքեալք տասներկու ընտրել Յիսուս:

Պ. Տասներկու թիւը մեծ խորհուրդ ունի, ոլ մարդկային մտքից վեր է, և սուրբ երրորդութեան անուան տասներկու տառերով ահա խաչ ներփակուածէ ՀԱՅՐ, ՈՐԴԻ, ՀՈԳԻ. ահա չորս անգամ երեք կայ մէջը, որ կ՚նշանակ է քառակուսի աթոռ Աստուածութեան, և՛երե՛ք անգամ չորս կայ մէջը, որ կ՚նշանակէ Աստուծոյ երեք անձնաւորութիւն, և այլ անթիւ իմաստներ, որ լուսաւոր մտաց կ՚թողում մեկնութիւնը և կ՚յանձնեմ իմաստասիրաց խոհականութեան։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՀԱՐՈՆԻ ՎԱԿԱՍԻ ԱԿԱՆՑ ՎԵՐԱՅ

Ահա խաչի ճաճանչաց երեքական թեւերի վերայ նշանակուած է զմրուխտ, կարկեհան, սարդիոն, շափիղա, տպազիոն, յասպիս, սուտակ, յակինթ, ակատ, բիւրեղ, կոճազմ և եղունգ:

Հ. Ի՞նչ է զմրուխտ և ինչ յատկութիւն ունի։

Պ. Զմրուխտի յատկութիւնն այն է, որ թէ ճէկի քով գրտնուէ՝ այլոց սէրը ելեքտրիոնակերպ զօրութիւնով դէպի յինքը կ՚քաշէ և գոյնը կանանչ կ՚լինի շատ գեղեցիկ, որոյ անուն յիշումէ Յայտնութեան 4 գլուխ։

Հ. Ինչ է կարկեհան և ինչ յատկութիւն ունի։

Պ. Սա կրակի գոյն ունի և գիշեր մթան մէջ

մարդ լաւ իւր վերայ նկատելով՝ կարծում է թէ կայծեր է արձակում. բայց թէ կեղծ չ՝լինի. շատ փայլուն գոյն ունի, և զօրութիւնն է թէ մարդ մօտը պահէ սիրտը երկիւղ չի մտնիլ, սորա անունը յիշումէ Եսայեայ 54 գլուխ։

Հ. Ի՞նչ է սարդիոն և ի՞նչ յատկութիւն ունի։

Պ. Սա կարմիր է և մսի գոյն կ՝լինի, երկու տեսակ է, մին գայլախազի պէս անթափանց է որ կնիք են քանդում, սորան եամանի կ՝անուանեն։ Իսկ միւս տեսակն ունի թափանցութիւն և պայծառ է, աւելի կարմիր և աւելի գոյնով քան զառաջին, սորան սէլլան կ՝ասեն. մօտը պահող մարդը չի մոռանայ ոչինչ բան, սորան անունը գրում է Առակաց 25 գլուխ։

Հ. Ի՞նչ է շափիղայ և ի՞նչ յատկութիւն ունի։

Պ. Շափիղայն կապուտագոյն տեղին գոյն ունի և մանր, ոսկու նման, մէջը աստղանիշ բծեր կամ ճիւղեր կան. այս ակն ազնիւ թափանցութիւն ունի, և գոհար գոհարաց կ՝ասեն սորան, որ թագաւորներ իւրեանց ապարանջանին կամ մանեակին վերայ կ՝կազմեն, և զօրութիւն ունի թոյն ոչնչացնելու, թէ որ մէջը ձգուի, կամ թունաւորին արբեցնեն նորանով խառնած ջրից, որոյ անունն գրում է Եսայեայ 5 գլուխ։

Հ. Ի՞նչ է տպազիոն և ի՞նչ յատկութիւն ունի։

Պ. Սորան ռամկօրէն տեղին սէլլան են ասում, ոմանք էլ տոպազ քար. կանանչ էլ է լինում և սպի-

տակ էլ՝ ոսկի գոյն, արեգական առաջ գոյներով շողեր արձակում է և մէկ տեսակն էլ ոսկեգոյն կ՝լինի։ Եւ սորա բնութիւնն փորձած է, եթէ եռացած ջրի մէջ թաթախես եռն կիջուցանէ. մարդ երբ սրտնեղի կամ բարկանայ և վերան նայէ սիրտը կը հանդարտի. փենդիհարի ևս զօրութիւն ունի, որոյ անուն յիշումէ Եզեկիէլի 28 գլուխ։

Հ. Ի՞նչ է յասպիս և ի՞նչ զօրութիւն ունի։

Պ. Սա զմրուխտի նման կանանչ և կարմիր ամէն գոյնից էլ համարեայ թէ լինում է, բայց ազնիւն է սևն և կանանչ։ Սորան տաճկերէն եաշիմ են ասում և ռամկօրէն զապարճատ. շատերը կան սորանից, որ մէջը ոլորուն գծերով զարդարուած ծառեր ծաղիկներ են երևում, սա ևս շափիղայի զօրութիւն և ներգործութիւն ունի, և անունն յիշում է Եզեկիէլի 28 գլուխ։

Հ. Ի՞նչ է Սուտակ և ի՞նչ յատկութիւն ունի։

Պ. Սուտակը կարմիր է, ռամկօրէն մեղուսիկ են ասում, յունարէն ամէնթոս, տաճկերէն լալ։ Սորա ներգործութիւնն է արեան հոսումն կտրելու և ճանապարհորդութեան ժամանակ, յաջողումն կլինի այն մարդուն, որ քովը կգտնուի։ Որոյ անունն յիշումէ Տորիայի 13 գլուխ։

Հ. Ի՞նչ է յակինթ և ի՞նչ յատկութիւն ունի։

Պ. Սորան տաճկերէն եաղութ են ասում, մէկ տեսակը կապուտագոյն կ՝լինի և մին տեսակ էլ ոսկեգոյն, այն ոսկեգոյնին ռամկօրէն ոսկէքար

էլ կասեն: Սորա յատկութիւնն է ջուր չեղած ժամանակ բերան դնելով ծարաւն անցնում է. և անուն յիշում է յայտնութեան 9 գլուխ:

Հ. Ի՞նչ է ակատ և ի՞նչ յատկութիւն ունի:

Պ. Սորան ռամկօրէն կատուի աչք են ասում և տաճկերէն չէշմի կուրպէ, սա կին չ՝վիժելու համար քովը պահելու է,

Հ. Ի՞նչ է բիւրեղ և ի՞նչ յատկութիւն ունի

Պ. Սորան տաճկերէն ասում են պեզատիէրչէ, ոսկեգոյնէ կանանչով խառն և վճիտ ճառագայթներ է արձակում, սա իւր գեղեցկութեան համար յարգի. բայց յատկութիւն չունի որոյ անուն գրում է ելից 28 գլուխ:

Հ. Ի՞նչ է կոճազմ և ի՞նչ յատկութիւն ունի:

Պ. Սաթի (քահրիպարի) նման գեղնագոյն է և հարթ, քաշող է դէպի իւրեան: Սա գոյանում է Լինքս երկրում մէկ ազգ կենդանու շեռից, նախ կակուղ է և վերջը կ՝չորանայ, սա ջրում լուծուում են և տալիս շեռ կապին, որ ազատուումէ. սորա անունն յիշումէ Եզեկիէլի 28 գլուխ:

Հ. Ի՞նչ է եղունգ և ի՞նչ յատկութիւն ունի:

Պ. Սորան ռամկօրէն պաղլամի քար են ասում և տաճկերէն սուլէյմանի, որ եղունգի գոյն ունի. Սա մարդուս ճակատի վերայ կապեն մէկ տեսակ գլխացաւի կ՝օգնէ, սորան անունն յիշում է Յովբ 28 գլուխ:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՎԵՐԱՑ

ստուծոյ եռանձնութեան, երկոտասան տառերից կոչուած առաքելոց անուանց ստուգաբանութիւն, ազգ, քարոզութիւն վիճակ և նահատակութիւն, որոց ձեռամբ կամ ո՞ւր, կարող է՞ք բացատրել:

Պ. Մեր կարդացած և տեղեկացածին չափ կարող եմք:

Հ. Յիսուսի առաջի կոչած աշակերտ և առաքեալը ո՞վ էր, ո՞ւր քարոզեց, ի՞նչ ազգ էր, ո՞ւմ ձեռամբ և ո՞ւր կատարեցաւ:

Պ. Սա էր Սիմոն Պետրոս, որ վէմ կ՝ստուգաբանի. ասորոց լիզուաւ, որ և յունարէն կեփաս. դարձեալ վէմ է: Սա քարոզեց Հռովմայեցւոց և խաչեցաւ Հռովմ քաղաքում գլխի վայր Ներոն կայսերէն:

Հ. Ո՞վ էր Անդրէաս և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Անդրէաս՝ յունարէն լեզուաւ կ'ստուգաբանի զօրութիւն, եւսա ես էր Նեփթաղիմայ ցեղից, որ նախ աշակերտ էր Յովհաննու և վերջ Յիսուսին։ Սա քարոզեց Հելլադայ և խաչուելով կատարեցաւ անդ Յեգիպտայ դատաւորէն։

Հ. Ո՞վ է Յակովբոս և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Յակովբոս եբրայեցւոց լեզուաւ խաբող կ'ընշանակի։ Սա Զեբեթիայի որդին էր և Զաբուղոնի ցեղէն, Սպանիա քարոզեց և առաքելոց առաջի նահատակ սա եղաւ Երուսաղէմի մէջ, որ Ագրիպպաս Հերովդեսի հրամանաւ գլխատեցաւ։

Հ. Յովհաննէս ո՞վ էր և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Յովհաննէս այսինքն՝ շնորհաւոր և ողորմած, սա Յակովբայ եղբայրն է և սիրելի աշակերտ Յիսուսի, գրեց Աւետարան և կաթուղիկեայ թուղթ, նաև յայտնութիւն։ Եփեսոսի մէջ քարոզելով բարի մահուամբ կատարեցաւ։

Հ. Ո՞վ էր Փիլիպպոս և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Յունարէն անուն է Փիլիպպոս, որ թարգմանի ձիասէր, Ասերայ ցեղէն էր և Գալիլիացւոց Բեթսայիդայէն, արդարև իւր անուան համեմատ սա պատերազմեց հրէից խստապարանոցութեան դէմ և Յերապօլիս Եփիփիմէ քաղաքում կախուելով կատարեցաւ։

Հ. Ո՞վ էր Բարդուղիմէոս և՛ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Եբրայեցւոց լեզուով բար—որէ որդի, այսինքն դիմէի որդի, ինչպէս գրումէ Մարկոս Աւետարանիչ 10 գլուխ 46 համարում։ Սա Հայաստան քարոզելով Յաղբակ գաւառի Յարեբանոն քաղաքում մորթը քերթելով կատարեցաւ։

Հ. Ո՞վէր Թովմաս և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Սա Յունարէն բառ է, այսինքն երկուորակ (ջամուկ)։ Հնդկաստան քարոզելով անդ Կալամոնիայ քաղաքում գլխատուեցաւ։

Հ. Ո՞վ էր Սիմօն և ի՞նչ կ'թարգմանի։

Պ. Սիմոն՝ այս է նախանձայոյզ, Եփրեմի ցեղէն էր և կանայ Գալիլիացւոյ փեսան, ուր որ Յիսուս ջուրը գինի փոխեց, որ վերջը Յիսուսին հետևելով և Բոստորանի մէջ սղով գլխատուեցաւ։

Հ. Ո՞վ էր Մատթէոս և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Եբրայեցւոց լեզուաւ է. այսինքն պարգև Աստուծոյ և ի Զաքարայ ցեղէն էր Նազարէթացի, որ մականուամբ ղեւի կ'կոչէին։ Ալփիայի որդին էր և գրեց Աւետարան, նաև խոնարհաբար իւր մաքսաւորութեան պաշտօնը յիշումէ։

Հ. Ո՞վ էր Թադէոս և ի՞նչ կ'ստուգաբանի։

Պ. Թադէոս կ՝թարգմանի գովող, սա Յուդայի ցեղէն էր, որ մականունը Ղեբէոս կոչեցաւ, և Կղէովբասի որդին էր, Հոյաստան քարոզեց և անդ Սանադրուկ թագաւորի ձեռամբ կատարեցաւ։

Հ, Ո՞վ էր Յակովբ տեառն եղբայր և ո՞ւմ որդին։

Պ։ Սա Հայր Յովսէփայ եղբայր Ալբէոսի որդին է և մօր անունը Մարիամ կղէովբեանց, որ և Աս-

ՀՍԽՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

տուածածնայ մօր քրոջ դուստրն է։ Սա դրեց կաթուղիկեաց թուղթ և իւր գլուխը թափչով ջարդեցին և թաղեցին Հիթենեաց լեռան վրայ։

Հ. Ո՞վ էր Յուդայ Սիմոնեան։

Պ. Սա Իսկարիովտացի էր և դանայ ցեղից, որ Յիսուսին մատնելով ինքն յուսահատութեամբ գնաց խեղդուեցաւ։ Սորա վիճակը հասաւ Մատաթիային, որ Ռուբէնի ցեղից էր։ Սա Պոնտացւոց քարոզելու գնաց և նոքա քարկոծելով գցեցին ծովու մէջ, և մարմինը գտան թաղեցին Բրիտոնի գերեզմանատանց մէջ։

ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՍ ՄԱՐԳԱՐԷԻՑ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

ՉՈՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

Այդ խաչի շրջապատը քսան և չորս Մարգարէից անուններ կան որքեն, Մովսէս, Յեսու, Յովբ, Սամուէլ Նաթան, Դաւիթ, Եղիա, Եղիսէ, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, Եսայիա, Ովսէ, Ամովս, Միքիա, Յովել, Աբդիու, Յովնան,

Նաւում, Ամբակում։ Աոփոնիա, Անգիա, Զաքարիա և Մաղաքիա, ինչ կ՚նշանակեն։

Պ. Որովհետև հոգենուագ մարգարէն գրումէ երկրորդ օրինաց երեսուն և երկու գլխում (Եւ կացոյց զսահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակացն Աստուծոյ) և դարձեալ է խաչաձև խորհրդաւոր հաշուով չորս վեց կայ, քսան և չորսի մէջ, վեց թևեան Սերովբէից օրինակին, և տասներկու զոյգ կայ, որ կ՚նշանակէ երկոտասան առաքելոց համակցաբար ունենալ բնական և ստացական կրկին հոգի։

Հ. Այդ խաչի երկրորդ վանդակների միջի գրուածները ինչեն։

Պ. Նա ահա անքննելի Աստուծոյ արարչութեան բոլոր խորհուրդը ունի, և նրաց միջնակարգի մէջ թուանշանաւ գրուած է. 1, Ստեղծ 2, և արար։ 3, Ասաց, 4, և Եղեն։ 5, Հրամայեաց 6, և Հաստատեցան։

Խաչի աջակողմը գրուած է Ստեղծ, ինչ. այս, ինքն—լոյս, որք են հրեշտակք։

Ձախակողմը գրուած է՝ Արար. ինչ այսէ-մարդ ձեռամբ իւրով։

Աջակողմը գրուած է՝ Ասաց. ինչ լինել կեանք բարի։

Ձախակողմը գրուած է՝ եւ Եղեւ. ինչ այսինքն՝ ընդ նմին եղեն մահ և չար։

Աջակողմը գրուած է Հրամայեաց. ինչ լինիլ լոյս և տիւ։ Բայց հաստատեցան ընդ նմա խաւար

և գիշեր։ Արեգակ յօրինակ իշխանական արքանի և լուսին յաճելութիւն իգականի։

Հ. Հրեշտակ ինչ պէտք իմանամք։

Պ. Իմացական գոյացութիւն է, Աստուծոյ հրամանակատար, հոգի անմարմին, անմահ, և արագաշարժ մարգուս մտաց պէս։

Հ. Հրեշտակները երբոր մեզ կերևնան՝ ինչ կերպով որ լինի երբոր ձեռք տանք՝ կարո՞ղենք շօշափել կամ բռնել թէ ոչ։

Պ. Այո՛, թէ որ կամենայ Աստուած. ինքն ալ թոյլատուութիւն կանէ, ինչպէս որ Աբրահամին թողտուին իւրեանց ոտքերը լուայ, և կամ Թովբիայն քանի ժամանակ Աստուծոյ հրեշտակի հետ միատեղ կընակէին։

Հ. Հրեշտակաց իմաստութիւնը արդեօք օրէ ցօր կաւելանա՞յ թէ ոչ։

Պ. Ոչ, որովհետև գիտութիւնը երանելի հոգւոց պարգև է, թէ որ օրէ օր աւելանար, ուրեմն աւելանալու դէմ պակասութիւն կայ, կենաց դէմ մահ։ Որովհետև անմահ հոգիք են հրեշտակները ուստի աննուազ և անյաւելեալ իմաստութիւն ունին։

Հ. Երկոտասան ամիսները չորս մասի բաժանուած խաչի մէջ ինչ կ'նշանակեն։

Պ. Որովհետև տարին չորս եղանակ ունի, և չորս տարերքից գոյացած է ամենայն արարածք, սոքա միմեանց համեմատելով դարձեալ ձևանումէ խաչ։

Ահա դարուն թագաւորումէ ջուր, որոյ ամիսներն են Մարտ, Ապրիլ և Մայիս։

Ամառ թագաւորումէ հուր, որոյ ամիսներն են Յունիս, Յուլիս և Օգոստոս։

Աշուն՝ թագաւորումէ հող, որոյ ամիսներն են Սեպտեմբեր, Հոկտեմբեր և Նոյեմբեր

Ձմեռ թագաւորումէ օդ, որոյ ամիսներն են Դեկտեմբեր, Յունվար. և Փետրվար։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

Խաչի միջի բոլորակի եղերքը գրուածէ (Մ՛ուտ ի յերկիր և երկնչիր յաշխարհէ. դա չէ փոքր իր) ինչ կ'նշանակէ։ Երկիր բառը որ երկնչիմ բայի հրամայական եղանակնէ երկրիս անուն յարմարապէս կոչած է, սորա համար մարդը։ Ծնած օրից մինչև կենաց կէտին—անվնաս, պարզ և ազատ պահողը միայն երկիւղն է։

Հ. Ի՞նչ երկիւղ։

Պ. Անուն չ'արատաւորելու երկիւղ, անձը չ'կորուսելու երկիւղ, ամօթ և արհամարհանք չ'կրելու երկիւղ. որոյ համար Մարգարէն լաւ է գրել (ո՛ւր ո՛չ իցէ երկիւղ անդ է երկիւղ, ո՛ւր իցէ երկիւղ անդ ո՛չիցէ երկիւղ)։

Հ. Ի՞նչ է աշխարհ բառը։

Պ. Աշխար՝ աշխարել (ողբալ, լալ) կնշանակէ,

իհարկէ մարդուս կեանքից վիշտ և վտանգ պակաս չեն լինում, և բոլորի վերջը աշխարում կայ. բայց ընդ ամեն չարիք և վիշտք միայն շատ ազդեցութիւն չեն կարող տալ, այն մարդին որ Աստուծոյ երկիւղն տակնէ ապրում՝ Աստուած է իւր յոյսը՝ և գործումէ ամենայն ինչ Աստուծով։

ՏԵՏՐԱԿՍ ՏՊԱԳՐԵՑԱՒ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՒՔ ՍՏՈՐԱԳՐԵԱԼ ԲԱՐԵՍԷՐ ԱՆՁԱՆՑ.

ՐՈՍՏՈՎ ԴՕՆԻ ՎԵՐԱՑ ՍԱԼՄԱՍՏ ՍԱԻՐԷՑԻ

Պարոն Դօվլաթ Յունանեան
Ռուստամ Մահտեսի Արմաղանեան
Սահակ Խաչատուրեան
Յովհաննէս Սահակեան Ասլանեանց
Աւետիս Առաքելեան Ամիրեանց
Բաղալ Տէր Յարութիւնեանց
Մուրադ Լալազարեանց
Միրտիչ Սայեաղով
Մահտեսի Աւագ Մահտեսի Աւէտով
Բաբէլյան Մարտիրոս Եղիազարեան
Դաւիթ Զաքութեանց
Միրտիչ Սարգսեան Ասլանեանց
Սահակ Բաբայեան Մնացականեանց
Պօղոս Քօչարեան Ֆռանկեանց
Յարութիւն և Միրտիչ Սալաթինեանց
Յովհաննէս Աղախանեան
Աւէտիք Յ. Առաքելեանց
Մարգարայ Եսայեանց
Յակովբ Մաթէոսեանց
Թովմաս Էյվազեանց
Մելքոն Յովհաննէսեան
Աղասի Գասպարով հին Նախիջևանցի
Սահակ Քօչարով հին քաղաքացի
Միրտիչ Բաբայով Հաղվէրանցի

ՋԱԼԹՈՒՐ ԳԻՒՂ

Գ. Գրիգոր Ա. Քահանայ Բարդախչեանց
Ա. Յովհաննէս Քահանայ Քրիստոսատուրեանց

Պ. Գասպար Աճայեան և իւր ընկերութիւն
Մանուկ Նիկողայոս Մահ. Ղուղկասեան զուարեանց
Յովհաննէս Ալէքսան Կոցիով
Յովսէփ Ակոպբ Զիբիչեանց
Մանուկ Տիրացու Ղազարոս Պարտախչեանց
Ծատուրի Մանուկի Ղուկասեան զուարեանց

ՄԵԾ ՍԱԼԱՑ ԳԻՒՂ.

Գ. Ալէքսիանոս Ա. Քահանայ Զօրայեանց
Ա. Առաքէլ քահանայ Տօմբայեանց
Ա. Յովակիմ քահանայ Շօուրեանց
Ա. Մարգար Լուսեղէնեան ուսուցիչ

ԹՕՓԳԻ ԳԻՒՂ.

Գ. Գաբրիէլ քահանայ Աբրահամեան
Ա. Բարսեղ քահանայ Նահապետեանց
Ա. Միքայէլ քահանայ Տէր Միքայէլեանց։

ՍԱԼՄԱՍՏԵՑԻ

Աղաբէկ Աւագով Կարապետեանց սալմաստեցի
Մկրտիչ Ներսէսեան սալմաստեցի
Լազար շամունով ուրմեցի
Յովհաննէս Աւէտով Մէջկարձակեանց Սաւրեցի
Մարտիրոս Մանուկով Տանուղեանց Նախիջևանցի
Յովհաննէս Յ. Թումայեանց Աստապատցի
Գէորգ Դաւիթով Սալմաստեցի
Աբգար Բաբաջանեան Ոսկանեանց Սալմաստեցի
Աբիտնակ Բաբայով Նդիգարեանց
Մկրտիչ Մնացականեան քէշիշքանդցի
Պ. Սողոմոն Յարութիւնեան Ղալասարցի
Կարապետ Ահարոնով Ղալասարցի
Յարութիւն Յաղնազարեան Հաֆթուանցի
Յովհաննէս Մ. Գրիգորեանց Հաֆթուանցի
Տովհաննէս Կարայով Սաւարէցի

Գասպար Համբարձումեան Հաֆթուանցի
Հայրիվերդի Համբարձումեան Հաֆթուանցի
Մանուկի Շահպազ Մ. Մինասեան Հաֆթուանցի
Հայրապետ Մանուկի Գրիգորեանց Հաֆթուանցի
Խուդօ Սարհադով Հաֆթուանցի
Մովսէս Ներսէսով Հաֆթուանցի
Աւագ Յաղվէրդեան Հաֆթուանցի
Աստուածատուր Գէորգեան Հաֆթուանցի
Բնեաթ Սարգսեան Խօյցի
Մկրտիչ Պ. Խաչատուրեանց

ՄԱՀԼԱՄՅԻ

Սարգիս Մ. Պաղդասարեան
Երանոս Սարգսեան Մ Պաղդասարեան
Մանուկի Յակոբ Աստուածատուրով
Մանուկի Յովսէփ Կ. Խօջայեանց
Զաքար Շ. Աւագեանց
Յովհանէս Զ. մէլիք Յակոբեանց
Անանիայ Մ. Դաւիթեան
Մկրտիչ Սարգսեան
Աւետիք Սարգսեան
Գէորգ Մարգարեան Տէր-Ղազարեանց
Աւագ Մելիք-Յակոբեանց
Յակոբ Ս. Մելիք-Յակոբեանց
Միքայէլ Յովհաննէսեան
Խիկար Զ. Սարգսեանց
Առաքել Թաղէոսեան
Մարդար Զ։ Սարգսեանց
Պօղոս Մ. Բաղդասարեան
Աբրահամ Օհանեան
Զիբրայէլ Կարապետեան
Աբրահամ Բարուխանեան

Ալէքսան Ա. Բաբուխանեանց
Նազար Կարապետեան Խօջայեանց
Մանուկ Մարգարեան Խօջայեանց
Միքայէլ Մ. Խօջայեանց
Մատթէոս Յակոբեան Մատթէոսեանց
Աւագ Ա. Մելիք-Մուրադեանց
Մարտիրոս Ա. Մելիք Մուրադեանց
Յովհան Ս. Շանսեանց
Ղազար Տէր-Ղազարեանց
Գաբրիէլ Մելիքցովսէփեան
Յակոբ Օհանեան
Գրիգոր Աբրահամեան
Խալաթ Յարութիւնեան
Գրիգոր Կարայեանց
Յակոբ Թովմայեանց
Աւագ Թ. Մատթէոսեանց
Յովհաննէս Պետրոսեան
Բաբուխան Գրիգորեան
Սահակ Թովմասեան
Ֆռանկ Թ. Մատթէոսեանց
Մարտիրոս Ղազարեան
Անանն Կ. մահտեսի Նիկողոսեանց
Դաղբար Թ. Խօջայեանց
Մարգար Յ. Գէորգեանց
Թադէոս Մ. Բաբայեանց
Յակոբ Կ. Իսրայելեանց
Մովսէս Թ. Բաբայեանց
Եղնայ Ս. Յակոբեանց
Աւետիք Ա. Միրզայեանց
Պետրոս Ն. Նազարեանց
Միքայէլ Ա. Նազարեանց

Օհան Թ. Մատթէոսեանց
Միքայէլ մահտեսի Պաղալեան
Ղազար Իսրայէլեան
Համբարձում Մանուկեան
Սարգիս Մանուկեան
Պետրոս Մ. Սօհրաթեանց, Հաֆթվանցի
Յակոբ Մ. Սօհրաթեանց Հաֆթվանցի
Հայրապետ Իսրայէլեանց Մահ.
Սարգիս Պարսեղեան Ռկաւացի
Զօհրաբ Յարութիւնեան Սաւրէցի
Աբրահամ Արզմանեան Հաֆթվանցի
Զաքարիա Թարվէրդեան Հաֆթվանցի
Յովհաննէս Առաքելեան քաղաքացի
Յովհաննէս Աբրահամեան Հաղվէրանցի
Աւետիք Յ. Օհաննէսեանց Սառնէցի
Վարդան Մխիթարեան Սառնէցի
Դաւիթ Խ. Բաբլոեանց Սառնէցի
Սարդար Յ. Մովսէսեանց Սառնէցի
Յակոբ Վ. Քոսոեանց Սառնէցի
Նայլ Տէր- Գրիգորեանց Ղարաբաղ. Ծմակահող գ.
Յարութիւն Գասպարեան Շերվանեանց Ղարաբաղցի
Դաւիթ Աւագեանց Ղարաբաղցի
Աւետիք Մուրադխանեան Ղազարեանց Փայաջուկցի
Մանուկ Մեհրաբեանց Հաղվէրանցի
Յակոբ Մնացականեան Հաղվէրանցի
Սարգիս Զիրաղեան Սառնէցի
Օրդու Հաշնազարեան Հաղվէրանցի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publiczna Biblioteka
7/XI-1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

0027360

760